

ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2017 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ (ՍԵՂՄԱԳԻՐ ՄԱՄՈՒԼԻ ՀԱՄԱՐ)

Միջոցառումներ

1. (կետ 119) «Հայաստանի Հանրապետությունում հրաձգություն մարզաձևի զարգացման ռազմավարությունը և դրա իրականացման 2018-2024 թվականների միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը:

2. (կետ 120) «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայական տարածման ազգային ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 24.08.2017 թ. № 36 արձանագրային որոշում):

3. (կետ 121) «Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի 2017-2020 թվականների զարգացման ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 29.07.2017 թ. № 28 արձանագրային որոշում):

4. (կետ 122) «Երիտասարդական պետական քաղաքականության 2018-2022 թվականների ռազմավարությանը և միջոցառումների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը

5. (կետ 123) «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամային սպորտի զարգացման հայեցակարգին հավանություն տալու մասին» ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելը

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 07.09.2017 թ. № 38 արձանագրային որոշում):

Գերակա խնդիրներ

1. (կետ 113) ՀՀ բնակչության շրջանում ֆիզիկական կուլտուրայի և մասսայական սպորտի տարածում

Գերակա խնդրի իրականացման նպատակով կատարվել է մեծ աշխատանք, այդ թվում իրականացվել են նաև 11 միջոցառումներ, որոնց կանոնակարգերն ու չափորոշիչները նախապես հաստատվել են ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամաններով և ուղարկվել համապատասխան մարմիններ: Միջոցառումներին մասնակցել են մոտ 113 000 մարդ:

1) Պետական մարմինների աշխատակիցների միջև հրաձգության հանրապետական մրցույթի անցկացում, 2) Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 1-ինից 3-րդ և 4-7-րդ դասարանների աշակերտների միջև «Սպորտլանդիա» մարզական միջոցառման անցկացում, 3) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ» մրցույթի անցկացում, 4) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի անցկացում, 5) Տարեցների հանրապետական խաղերի անցկացում, 6) Հայաստանի Հանրապետության մարզերում և ԼՂՀ-ում հանրապետական մարզական փառատոնի անցկացում, 7) ՀՀ գյուղական մարզական խաղերի անցկացում,

8) Հայաստանի Հանրապետության մարզերի, Երևան քաղաքի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հանրակրթական դպրոցների 8-12-րդ դասարանների աշակերտների սպարտակիադայի անցկացում, 9) Նախազորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության հանրապետական ռազմամարզական խաղերի անցկացում, 10) Հանրապետական ուսանողական մարզական խաղերի անցկացում, 11) Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական բակ», «Լավագույն մարզական քաղաք» և «Լավագույն մարզական գյուղ» հանրապետական ստուգատեսների աշխատանքների համակարգում,

2. (կետ 114) Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի զարգացում

Հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևի մարզային առաջնություն է անցկացվել 2017 թվականի ապրիլի 28-30-ը Երևանում, մասնակցել են ՀՀ 6 մարզեր: 26 մարզիչներ վերապատրաստվել են հայկական ազգային կոխ ըմբշամարտ մարզաձևն ուսուցանելու նպատակով: ՀՀ Կոտայքի մարզի Գառնի գյուղում հուլիսի 7-8-ը անցկացվել է հայկական ազգային կոխ ըմբշամարտի երիտասարդների ՀՀ բաց առաջնությունը: ՀՀ մարզիկները ՌԴ Ուլյանովսկ քաղաքում մասնակցել են 2017 թվականի օգոստոսի 11-16-ը անցկացված ԱՊՀ անդամ-պետությունների ազգային մարզաձևերի և խաղերի առաջին փառատունին գոտիներով ըմբշամարտ մարզաձևից և նվաճել մեկ արծաթե, մեկ բրոնզե մեդալ:

3. (կետ 115) Երիտասարդների ներգրավվածության մակարդակի բարձրացում

2017 թվականի ապրիլի 10-ից մինչև մայիսի 16-ը իրականացվել է «Երիտասարդական աշխատող, երիտասարդական աշխատանք» ծրագիրը: Իրականացվել է «Երիտասարդական աշխատողի վերապատրաստում» ծրագիրը: 2017 թվականի մարտի 9-10-ը Աղվերանում իրականացվել է «Դասընթաց երիտասարդական հասարակական կազմակերպությունների համար» ծրագիրը: 2017 թվականի մայիսի 17-ից հուլիսի 31-ը իրականացվել է «Հանդիպում-քննարկում մարզային երիտասարդության շրջանում» ծրագիրը: Տրամադրվել է 29 դրամաշնորհ:

4. (կետ 116) Սպորտային տուրիզմի զարգացման հայեցակարգի մշակում

Հայեցակարգի նախագիծը մշակվել և սահմանված կարգով ներկայացվել է ՀՀ կառավարության քննարկմանը:

5. (կետ 117) Բակային մարզական միջոցառումների միջոցով Երևանում և ՀՀ մարզերում մասսայական սպորտի զարգացման խթանում

Մշակվել և սահմանված կարգով ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծը, որը ՀՀ կառավարության հավանությանն է արժանացել (ՀՀ կառավարության 10.08.2017 թ. № 38 արձանագրային որոշում):

6. (կետ 118) Ֆիզիկական կուլտուրայի միջոցով նախադպրոցական տարիքի երեխաների շրջանում առողջ ապրելակերպի սերմանում և տարածում

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական նախադպրոցական հաստատություն» մրցույթ

Մրցույթն իրականացվել է 3 փուլով՝ համայնքային, մարզային և եզրափակիչ: Համայնքային փուլին մասնակցել են 243 նախադպրոցական հաստատությունների 2916 մասնակիցներ: Եզրափակիչ փուլին՝ մասնակցել են ՀՀ բոլոր մարզերի և Արցախի Հանրապետության Ստեփանակերտ քաղաքի 11 նախադպրոցական հաստատությունների 132 մասնակիցներ:

7. (կետ 119) Սոցիալապես անապահով և առանց ծնողական խնամքի մնացած դպրոցահասակ երեխաների շրջանում ֆիզիկական կուլտուրայի դերի կարևորում և տարածում

Հայաստանի Հանրապետության Նախագահի մրցանակի համար «Երեխաների խնամքի և պաշտպանության լավագույն մարզական հաստատություն» մրցույթ

Մրցույթն իրականացվել է մարտ-ապրիլ ամիսներին՝ 2 փուլով: Նախնական փուլին մասնակցել են երեխաների խնամքի և պաշտպանության 12 հաստատությունների 300 մասնակիցներ: Եզրափակիչ փուլն անցկացվել է ապրիլի 27-ից 28-ը Գյումրի քաղաքում, որին մասնակցել են երեխաների խնամքի և պաշտպանության 12 հաստատությունների 144 մասնակիցներ: Մրցույթն անցկացվել է 5 մրցաձևերով: